ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գ Ի Տ Ու Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

քաղաք Երևան «05» փետրվարի 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 08-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 38-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով և 34-րդ հոդվածի 1-ին կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը հաստատելու վերաբերյալ» N38-Ա/Ք հրամանի N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N1-ի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահի
2019 թ. փետրվարի 5-ի
N 08-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «____» _____ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ը, ի
(կազմակերպության անվանումը)

դեմս _____ ի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (այսուհետ՝
(պաշտոն, անուն, ազգանուն)

միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշումը (այսուհետ՝ Որոշում),

_____ «_____»
(ծածկագիրը) *(վերնագիրը)*

գիտական թեմայի (այսուհետ՝ Թեմա) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Թեմայի իրականացման նպատակով հատկացնել _____ ՀՀ դրամ
(թվերով և բառերով)

գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), որի չափը հաստատված է Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությամբ (Հավելված 1), իսկ Կատարողը պարտավորվում է Թեման իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Թեմայով նախատեսված՝ Կատարողի կողմից իրականացվելիք գիտական հետազոտությունների միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կատարման փուլերի ժամկետները և ֆինանսավորման ծավալները որոշվում են առաջադրանքով, օրացուցային պլանով և նախահաշվով (Հավելվածներ 2, 3 և 4):

2. Թեմայի համաֆինանսավորումը

2.1 Թեմայի իրականացման համար համաֆինանսավորող կազմակերպության կողմից ֆինանսավորման չափը կազմում է _____ ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)

2.2 Համաֆինանսավորող կազմակերպության կողմից երաշխավորված գումարը փոխանցվում է կազմակերպությանը, որտեղ Թեման կատարվելու է, սույն Պայմանագիրը կնքելուց հետո 7-օրյա ժամկետում:

2.3 Ֆինանսավորման երաշխավորված նախագծի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից Կոմիտեն սկսում է համաֆինանսավորման ամբողջ ծավալը փոխանցելուց հետո:

2.4 Համաֆինանսավորող կազմակերպության կողմից երաշխավորված գումարը Պայմանագրում նշված ժամկետում չփոխանցելու դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված.

3 Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 Կոմիտեն իրավունք ունի՝

3.1.1 Կատարողից պահանջել կատարելու Պայմանագրի **3.4.** կետով նախատեսված պարտավորությունները,

3.1.2 Կատարողից պահանջել աշխատանքը կատարել Պայմանագրի **8**-րդ կետում նշված ժամկետում,

3.1.3 չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

3.1.4 կատարել Թեմայի ղեկավարի փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ կազմակերպության, որտեղ կատարվում է Թեման, գիտական (գիտատեխնիկական) խորհրդի միջնորդությամբ և Թեմայում ընդգրկված կատարողների համաձայնությամբ,

3.1.5 Թեմայի ղեկավարի առաջարկությամբ կատարել Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի վերաբաշխում, Թեմայի իրականացման 12 ամիս ժամանակահատվածում մեկ անգամ՝ դրա 20 տոկոսի չափով,

3.1.6 Թեմայի ղեկավարի միջնորդությամբ կատարել Թեմայի կատարողների կազմում փոփոխություն՝ համարժեք թեկնածության դեպքում,

3.1.7 դադարեցնել Թեմայի ֆինանսավորումը առանց Կոմիտեի համաձայնության Թեմայի կատարողների կազմում փոփոխություն, ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում վերաբաշխում կատարելու դեպքերում, ինչպես նաև ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում՝ ընթացիկ հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող ամսից:

3.2 Կատարողն իրավունք ունի՝

3.2.1 իրականացված Միջոցառման արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը,

3.2.2 Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,

3.2.3 Թեմայի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

3.2.4 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

3.3 Կոմիտեն պարտավոր է՝

3.3.1 ընդունել կատարված աշխատանքի արդյունքը Որոշման 16-ից 18-րդ կետերին համապատասխան և վճարել դրա համար,

3.3.2 Թեմայի իրականացման մասին ներկայացված ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների վերաբերյալ ընդունել համապատասխան որոշում:

3.4 Կատարողը պարտավոր է՝

3.4.1 Թեման կատարել անձամբ,

3.4.2 Թեման կատարել Կոմիտեի կողմից հաստատված առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել Պայմանագրի **8**-րդ կետում նշված ժամկետում,

3.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով,

3.4.4 Թեմայի իրականացման աշխատանքների ավարտման օրվա դրությամբ չօգտագործված ֆինանսական միջոցները մեկշաբաթյա ժամկետում վերադարձնել Կոմիտեի համապատասխան հաշվին՝ կցելով ֆինանսական միջոցների չօգտագործման վերաբերյալ բացատրագիր,

3.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

3.4.6 աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Կոմիտե,

3.4.7 Կոմիտե ներկայացնել Թեմայի իրականացման մասին ընթացիկ հաշվետվություն, իսկ Թեմայի ավարտից հետո՝ ամփոփիչ հաշվետվություն: Ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է իրականացման ժամկետի սկզբից հաշված 12-րդ ամսվան հաջորդող ամսվա առաջին 10-օրյակում, իսկ ամփոփիչ հաշվետվությունը՝ Թեմայի իրականացման ավարտից հետո 20 օրվա ընթացքում,

3.4.8 մեկշաբաթյա ժամկետում Կոմիտե տեղեկացնել տարեկան 2 ամսից ավելի ժամկետով Հայաստանի Հանրապետությունից Թեմայի ղեկավարի կամ կատարողի անընդհատ բացակայության, ինչպես նաև ֆինանսական միջոցների օգտագործման նպատակների փոփոխման և այլ հանգամանքների մասին,

3.4.9 Թեմայի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

3.4.10 Թեմայի շրջանակներում իրականացված ցանկացած գիտական հրապարակման մեջ՝ ներառյալ զեկույցների թեզիսները, հղում կատարել Թեմայի վրա, նշելով դրա ծածկագիրը:

4 Թեմայի ֆինանսավորման չափը

Թեմայի ֆինանսավորման չափը ՀՀ ԿԳՆ ԳԿ կողմից կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ, որը հաստատված է
(թվերով և բառերով)
Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությամբ:

5 Մոնիթորինգ

5.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է Թեմայի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Թեմային առնչվող փաստաթղթեր և նյութեր:

5.2 Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

5.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

6 Վճարման կարգը և ժամկետները

6.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Կատարողին Պայմանագրում նշված նրա հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6.2 Հաշվի առնելով աշխատանքների առանձնահատկությունները և ելնելով Կոմիտեի ֆինանսավորման հնարավորություններից՝ կարող է սահմանվել **6.1.** կետում նշված գրաֆիկից տարբերվող այլ տոկոսային բաշխում:

7 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Թեմայով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման

չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողին վճարվելիք գումարներից:

8 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է _____ ամիս ժամկետով:

9 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10 Եզրափակիչ դրույթներ

10.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

10.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

10.2.1 Կատարողի կողմից Կոմիտե ներկայացված Թեմայի հայտը,

10.2.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (Հավելված 1),

10.2.3 Առաջադրանքը (Հավելված 2),

10.2.4 Օրացուցային պլանը (Հավելված 3),

10.2.5 Նախահաշիվը (Հավելված 4):

10.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

11 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե՝

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/հ 900011033066

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղար՝

_____

(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կ. Տ.

Կատարող՝

_____

(կազմակերպության անվանումը)

_____

(կազմակերպության հասցեն)

_____

(կազմակերպության բանկային վավերապայմանները)

Թեմայի ղեկավար՝

_____

(ստորագրություն)

_____

(անուն, ազգանուն)

Ստորագրությունը հաստատում եմ՝

_____

(ստորագրություն)

_____

(պաշտոն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Հավելված 1
«_____» _____ 20.. թ.
N _____ պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանը և Թեմայի ղեկավար _____ը, վկայում ենք, որ
(անուն, ազգանուն)
Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «_____» _____ 20.. թ. N _____ պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ _____ ՀՀ դրամ գումարի
(թվերով և բառերով)
չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Գիտության կոմիտե՝	**Կատարող՝**
Գլխավոր քարտուղար՝	Թեմայի ղեկավար՝
_____	_____
(ստորագրություն)	*(ստորագրություն)*
ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ	_____
	(անուն, ազգանուն)

Հավելված 2
«_____» _____ 20.. թ.
N _____ պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

_____ «_____» թեմայի
(ծածկագիրը) *(վերնագիրը)*

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի «___» _____ 20.. թ. N _____ հրաման:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):
3. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Գիտության կոմիտե՝

Գլխավոր քարտուղար՝

_____
(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կատարող՝

Թեմայի ղեկավար՝

_____
(ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն)

Հավելված 3
«_____» _____ 20.. թ.
N _____ պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ [1]

_____ «_____» թեմայի
(ծածկագիրը) *(վերնագիրը)*

Հ/հ	Իրականացվելիք միջոցառման				
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
Ընդամենը					

Գիտության կոմիտե՝

Գլխավոր քարտուղար՝

_____
(ստորագրություն)

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

Կատարող՝

Թեմայի ղեկավար՝

_____
(ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն)

[1] Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով

Հավելված 4
«_____» _____ 20.. թ.
N _____ պայմանագրի

Համաձայն եմ՝

Գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

Նախահաշիվ

_____ «_____» թեմայի

(ծածկագիրը) *(վերնագիրը)*

(հազար դրամ)

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝		
			20.. թ.	20.. թ.	20.. թ.
1.	Աշխատանքի վարձատրություն՝ ներառյալ եկամտային հարկը				
2.	Այլ ծախսեր, այդ թվում՝				
	սարքեր և սարքավորումներ				
	նյութեր և գրենական պիտույքներ				
	գործուղումներ				
	արշավախմբեր				
	ենթապայմանագրային համագործակցություն				
	վերադիր ծախսեր				
	.....				
Ընդամենը (առանց ԱԱՀ)					
ԱԱՀ					
ԸՆԴԱՄԵՆԸ					

Թեմայի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կ.Տ.

*** Թեմայի նախահաշվի ծախսերը ներկայացվում են նախագծի իրականացման համար նախատեսված ամբողջ գումարի համար (ՀՀ պետական բյուջե + համաֆինանսավորում):**

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան «____» _____ 20.. թ.

_____ ծածկագրով «_____» գիտական թեմայի
(թեմայի վերնագիրը)
(այսուհետ՝ Թեմա) ղեկավարը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս _____ -ի, մի կողմից, և
(անուն, ազգանուն)

_____ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս _____ -ի,
(կազմակերպության անվանումը) *(տնօրեն/ռեկտոր անուն, ազգանուն)*
մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել Պայմանագրի **1.2.** կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրինության տակ թողնված գումարների և գիտական կազմակերպությունում առկա նյութատեխնիկական միջոցների հաշվին ապահովել անհրաժեշտ պայմաններ. տարածք, էլեկտրականություն, ջրամատակարարում, ջեռուցում, կոմունալ սպասարկում, կապ, նյութատեխնիկական արժեքների պահպանում և այլն:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է «___»_____ 20.. թ. մինչև «___»_____ 20..թ.:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով, Պայմանագրի **1.3.** կետում նշված ժամկետում,

2.1.2. Պատվիրատուի պահանջով ___ օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.3. Թեմային հատկացված «Այլ ծախսեր» բաղկացուցիչի միջոցների սահմաններում և Պատվիրատուի գրավոր պահանջագրերի հիման վրա կատարել ֆինանսական գործարքներ Թեմայի իրականացման նպատակով,

2.1.4. գրավոր հիմնավորել պահանջագրերի չիրականացման կամ մերժման պատճառները,

2.1.5. Պատվիրատուին ժամանակին տեղյակ պահել ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեից ստացված ֆինանսական, կազմակերպչական և Պայմանագրի հետ առնչվող այլ հարցերով ընդունված որոշումների, հրամանների, հրահանգների մասին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. ծառայությունների մատուցման համար վճարել Պայմանագրի **3**-րդ հոդվածում նշված գնին համապատասխան,

2.2.2. Թեմայի կատարողների հետ կնքել պայմանագրեր՝ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. ստուգել Կատարողի ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.3.2. ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է արդեն մատուցված ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, որը Թեմայի «Այլ
(թվերով և բառերով)
ծախսեր» հոդվածով հատկացված գումարի ____ տոկոսն է, և թողնվում է գիտական կազմակերպության տնօրենի (ռեկտորի) իրավասությանը՝ թեմայի կատարումն ապահովելու համար:

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է Պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի **1.3.** կետում նշված ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք Պայմանագրի արժեքի ____ տոկոսի չափով և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար ____տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտա-րարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
_____	_____
(անուն, ազգանուն)	(կազմակերպության անվանումը)
_____	_____
(հասցեն, հեռախոս)	(հասցեն)
_____	_____
(բանկային վավերապայմաններ)	(բանկային վավերապայմանները)
	_____
	(պաշտոն, անուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Կ. Տ.